

ԳՈՏԵՈՐՔԻՆԻ (SHINGLES) ՊԱՏՎԱՍՏ



ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱԸՔ ԴՈՒՔ

Պատվաստի մասին շատ տեղեկությունների հայտարարություններ կան իրապետներով եւ այլ լեզուներով: Տես www.immunize.org/via կայքը:

1 Ի՞նչ է գոտեորքինը:

Գոտեորքինը մաշկի ցավոտ ցան է, որ հաճախ ուղեկցվում է բշտիկներով: Դա նաեւ անվանվում է Գերպեզային Գոտի (Herpes Zoster), կամ պարզապես Գոտի (Zoster):

Գոտեորքինի ցանը սովորաբար հայտնվում է դեմքի կամ մարմնի մի կողմի վրա եւ տեւում է 2-ից մինչեւ 4 շաբաթ: Դրա հիմնական ախտանիշը ցավն է, որը կարող է բավական ծանր լինել: Գոտեորքինի մյուս ախտանշաններն են՝ տաքությունը, գլխացավը, դողը եւ ստամոքսի անհանգստությունը:



Գոտեորքինի վարակը հազվադեպորեն կարող է առաջնորդել թոքերի բորբոքումի, լսողական խնդիրների, կուրության, ուղեղի բորբոքումի (Էնցեֆալիտ) կամ մահվան:

5 մարդուց 1-ի մոտ ծանր ցավը կարող է շարունակվել երկար, ևսյնիսկ ցանն անցնելուց հետո: Սա կոչվում է հետ-հերպեսային նյարդացավ:

Գոտեորքինը առաջանում է Զրծաղիկային Գոտի (Varicella Zoster) մանրէից, ևսյն մանրէն, որ առաջացնում է ջրծաղիկ:

Միայն այն անձը, որ ջրծաղիկ է ունեցել կամ, հազվադեպորեն, ստացել է ջրծաղիկի պատվաստ, կարող է գոտեորքինով վարակվել: Այս մանրէն մնում է ձեր մարմնում եւ շատ տարիներ հետո կարող է պատճառ դառնալ գոտեորքինով վարակվելուն:

Դուք չեք կարող գոտեորքինով հիվանդ մի այլ մարդուց վարակվել: Այնուամենայնիվ, այն անձը, որը երբեւիցե չի հիվանդացել ջրծաղիկով (կամ չի ստացել ջրծաղիկի պատվաստ), գոտեորքին ունեցող մարդուց կարող է վարակվել ջրծաղիկով: Սա շատ ընդհանրացած չէ:

Գոտեորքինը շատ ավելի ընդհանրացած է 50 տարեկան եւ ավելի տարեց մարդկանց մոտ, քան երիտասարդների: Դա ևսյնապես ավելի ընդհանրացած է այն մարդկանց մոտ, ում իմունային համակարգը տկարացած է այնպիսի հիվանդություններից, ինչպես՝ քաղցկեղը, կամ այնպիսի դեղերից, ինչպես ստերոիդները կամ քիմիոթերապիան:

Տարեկան անվազն 1 միլիոն մարդ Միացյալ Նահանգներում հիվանդանում է գոտեորքինով:

2 Գոտեորքինի պատվաստ

Գոտեորքինի պատվաստը արտոնագրվել է 2006-ին: Դարմանատեսային փորձարկումների ժամանակ պատվաստը 50%-ով նվազեցրել է գոտեորքինի ռիսկը: Այն ևսյնապես կարող է նվազեցնել ցավը այն մարդկանց մոտ, ովքեր պատվաստումից հետո դեռեւս հիվանդանում են գոտեորքինով:

60 տարեկան եւ ավելի տարեց մարդկանց հանձնարարվում է գոտեորքինի մեկ չափաբաժին պատվաստ:

3 Որոշ մարդիկ պետք չէ գոտեորքինի պատվաստ ստանան կամ պետք է սպասեն

Այն անձը պետք չէ ստանա գոտեորքինի պատվաստ, ով՝

- երբեւիցե ունեցել է կյանքի համար վտանգավոր ալերգիկ ռեակցիա ժելատինից, սեռմիցին կոչվող անտիբիոտիկից կամ գոտեորքինի պատվաստի որեւէ մեկ բաղադրիչից: Տեղեկացրեք ձեր բժշկին, եթե դուք ունեք որեւէ ծանր ալերգիա:
- ունի իմունային տկար համակարգ հետեւյալ պատճառներով.
 - ՁԻԱՎ (AIDS) կամ այլ հիվանդություն, որ ազդում է իմունային համակարգի վրա,
 - իմունային համակարգի վրա ազդող դեղերով բուժումը, ինչպես բարձր չափաբաժնով ստերոիդների երկար օգտագործումը,
 - քաղցկեղի բուժումը, ինչպես ճառագայթումը կամ քիմիոթերապիան,

- ողնածուծի կամ լիմֆատիկ համակարգի վրա ազդող քաղցկեղ, ինչպես էլյկեմիա կամ լիմֆոմա:

- Հղի է կամ կարող է հղի լինել: Կանայք պետք է հղիանան մինչև գոտեորքինի պատվաստ ստանալուց չանցնի առնվազն 4 շաբաթ:

Թեթև հիվանդություն, ինչպես մրսածություն, ունեցող որեւէ մեկը կարող է պատվաստ ստանալ: Բայց միջին կամ ծանր հիվանդությամբ որեւէ մեկը սովորաբար պետք է սպասի մինչև առողջանալը՝ նախքան պատվաստ ստանալը: Սրա մեջ մտնում են 101.3° F եւ բարձր տաքություն ունեցող մարդիկ:

4 Որո՞նք են գոտեորքինի պատվաստի վտանգները:

Պատվաստը, որեւէ այլ դեղի նման, կարող է հավանական լուրջ հետեւանքներ առաջացնել, ինչպես՝ ծանր ալերգիկ ռեակցիաներ: Այնուամենայնիվ, պատվաստից առաջացած ծանր վնասվածքների վտանգը կամ մահը չափազանց փոքր է:

Գոտեորքինի պատվաստից լուրջ խնդիրներ չեն հաստատագրվել:

Թեթև պրոբլեմներ

- Կարմրություն, կոկորդի ցավ, այտուց կամ ջոր՝ ասեղի տեղում (3 մարդուց 1 հոգի):
- Գլխացավ (70 մարդուց 1 հոգի):

Ինչպես բոլոր պատվաստները, գոտեորքինի պատվաստը մանրամասնորեն դիտարկվում է անսովոր կամ ծանր հետեւանքները հայտնաբերելու նպատակով:

5 Ի՞նչ անել չափավոր կամ ծանր ռեակցիայի դեպքում:

Ես ինչի՞ վրա պետք է ուշադրություն դարձնեմ:

Որեւէ անսովոր վիճակի, ինչպես ծանր ալերգիկ ռեակցիա կամ բարձր տաքություն: Եթե ծանր ալերգիկ ռեակցիա առաջանա, դա կլինի ներարկումից ընդամենը մի քանի րոպեից մինչև մեկ ժամվա ընթացքում: Ծանր ալերգիկ ռեակցիայի

նշանները կարող են լինել ծանր շնչառությունը, թուլությունը, խռպոտությունը կամ խզզոցը, սրտի արագ բարախումը, ցաները, գլխապտույտը, գունատությունը կամ կոկորդի այտուցը:

Ես ի՞նչ պետք է անեմ:

- **Չանգեք** բժշկին կամ տվյալ անձին անմիջապես տարեք բժշկի:
- **Ասեք** ձեր բժշկին, թե ինչ է պատահել, դեպքի օրը եւ ժամանակը եւ երբ է պատվաստը տրվել:
- **Խնդրեք** ձեր մատակարարին, որ ռեակցիայի մասին տեղեկագրի՝ լրացնելով Պատվաստի Հակազդեցության Դեպքերի Տեղեկագրման Համակարգի (Vaccine Adverse Event Reporting System, VAERS) ձեւ: Կամ դուք կարող եք տեղեկագիրը լրացնել VAERS-ի կայքում www.vaers.hhs.gov հասցեով կամ զանգահարել **1-800-822-7967** համարով:

VAERS-ը բժշկական խորհուրդներ չի մատակարարում:

6 Ինչպե՞ս կարող եմ ավելի տեղեկություն ունենալ:

- Հարցրեք ձեր բժշկին կամ մի ուրիշ առողջապահական խնամք ապահովողի: Նրանք կարող են ձեզ տալ պատվաստի փաթեթի ներդիրը կամ առաջարկել տեղեկության այլ աղբյուրներ: **1-888-767-4687**
- Կապվեք Հիվանդությունների Կառավարման եւ Կանխարգելման Կենտրոնների հետ (CDC).
 - Չանգահարեք **1-800-232-4636 (1-800-CDC-INFO)** համարով
 - Այցելեք CDC-ի կայքը՝ www.cdc.gov/vaccines

DCH-1340A
AUTH: P.H.S., Act 42, Sect. 2126.



U.S. DEPARTMENT OF HEALTH AND HUMAN SERVICES
CENTERS FOR DISEASE CONTROL AND PREVENTION

Vaccine Information Statement
Shingles Vaccine (MM-002AN) – Amnstan (10/6/2009) 42 U.S.C. §300aa-26
Translated by Transcend Translations, Davis, CA www.transcend.net

Բժշկական խնամք ապահովողներին թույլատրվում է համար պատվաստումների իրականացման փոփոխություններ կատարել, եթե դրանք համապատասխանում են հետազոտությանը և հետազոտությանը համապատասխանում են: Այնուամենայնիվ, միջանկյալ ընթացքում կատարվող հետազոտությունները կապված են Michigan Care Improvement Registry (Միչիգանի խնամքի բարելավման գրանցման կենտրոն): Այնուամենայնիվ, ինչպես բոլոր պատվաստումները, այս պատվաստումը կարող է պատվաստումների տեղեկությունները գրանցման կենտրոն չափարկվել: